*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ*

# *Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝* «Մայրենի», «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Մաթեմատիկա» առարկաների դերը գեղագիտական դաստիարակության մեջ

*Առարկան՝* Դասվար

*Հետազոտող ուսուցիչ՝* Գևորգյան Նունե

*Ուսումնական հաստատություն՝* *ՀՀ Արագածոտն մարզի* Ագարակի Տ. Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց

*Երևան 2022*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ I Գեղագիտական դաստիարակություն

1.1 Գեղագիտական դաստիարակության՝ նպատակը, խնդիրները, գործառույթները-4

Գլուխ II Մայրենի լեզու, Երաժշտություն, Կերպարվեստ, Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհ առարկաների դերը գեղագիտական դաստիարակության մեջ

2.1 Մայրենի լեզվի դերը գեղագիտական դաստիարակության մեջ 6

2.2 Երաժշտության դերը գեղագիտական դաստիարակության մեջ 7

2.3 Կերպարվեստի դերը գեղագիտական դաստիարակության մեջ 9

2.4 Մաթեմատիկայի դերը գեղագիտական դաստիարակության մեջ 11

2.5 Ես և շրջակա աշխարհի դերը գեղագիտական դաստիարակության մեջ 12

Եզրակացություն 14

Գրականության ցանկ 15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն՝ Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է իրականության կարևորագույն, ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության հիմնական նպատակներից մեկը: Այդ իսկ պաճառով շատ կարևոր է, որ դեռ դպրոցական տարիներից երեխաների մեջ ձևավորել գեղեցիկը ճանաչելու և գնահատելու արժեքները: Դպրոցական տարիներին դա արվում է, քանի որ աշակերտները սկսում են ուսումնասիրել տարբեր առարկաներ, հասկանալ առարկաների կարևորությունը և այդ կարևորության մեջ գեղեցիկը և լավը ընդօրինակելու ունակություններ են ձեռք բերում:

Նպատակ՝ ուսումնասիրել մայրենի լեզու, երաժշտություն, կերպարվեստ, մաթեմատիկա, ես և շրջակա առարկաների դերը գեղագիտական դաստիարակության մեջ:

Օբյեկտը՝ դպրոցականներն են, ովքոր առնչվում են այս առարկաների հետ և գտնվում են այս առարկաների անմիջական ազդեցության տակ:

Առարկա՝ Գեղագիտական դաստիարակության մեջ հայոց լեզվի, երաժշտության, կերպարվեստի, մաթեմատիկայի և ես և շրջակա աշխարհի դերը:

Խնդիրները՝

- Ուսումնասիրել գեղագիտական դաստիարակության նպատակը, խնդիրները, գործառույթները
- Մայրենի լեզվի դերը գեղագիտական դաստիարակության մեջ
- Երաժշտության դերը գեղագիտական դաստիարակության մեջ
- Կերպարվեստի դերը գեղագիտական դաստիարակության մեջ
- Մաթեմատիկայի դերը գեղագիտական դաստիարակության մեջ
- Ես և շրջակա աշխարհի դերը գեղագիտական դաստիարակության մեջ

# ԳԼՈՒԽ I ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## 1.1 Գեղագիտական դաստիարակության՝ նպատակը, խնդիրները, գործառույթները:

Գեղագիտությունը կամ էսթետիկան (հունարեն՝ aisteticos-զգայությամբ ընկալվող) թեև որպես գիտություն ձևավորվել է միայն 18-րդ դարում գերմանացի փիլիսոփա Ա. Գ. Բաումգարտենի կողմից, սակայն որպես իմացության հուզազգացմունքային և գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում: Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկի պահանջը, գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անքակտելի մասը: Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է նաև իրականության կարևորագույն, ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության (ճանաչողության) հիմնական նպատակներից մեկը: Եվ, բնականաբար, գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ[8]:

Գեղագիտական դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողների համատեղ ջանքերի գործընթաց է՝ դաստիարակվողների գեղագիտական կուլտուրան ձևավորելու համար[5]:

Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների, կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը, ակտիվացնում, ընդլայնում և բավարարում է գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները[7]:

Վ. Գ. Բելինսկին ասում էր.<< Աշխարհը կարելի է ճանաչել երկու ձևով գիտության և արվեստի>>:

Գեղագիտական դաստիարակության էության մեջ դրսևորվում են երեք կողմեր՝

1. Անձի գեղագիտական ընկալումներն ու ըմբռնումները,
2. Գեղագիտական պատկերացումներտ ու դատողությունները,
3. Գեղագիտական մտածողությունն ու համոզմունքները:

Առանց այդ որակների անձը չի կարող արժևորել ու գնահատել արվեստի գործերը, նա չի ունենա գողագիտական ճաշակ: Ահա այդ է պատճառը, որ մարդիկ տարբեր ձևով են ընկալում ու զգում գեղեցիկը[5]:

Գեղագիտական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանց շարքին են դասվում.

- սովորողների գեղագիտական ընկալումների ու ըմբռնումների ձևավորումն ու դաստիարակությունը,
- գեղագիտական դատողությունների ու մտածողության ձևավորումը,
- գեղագիտական պատկերացումների ձևավորումն ու դաստիարակումը,
- գեղագիտական զգացմունքների ու գնահատումների դաստիարակումը,
- գեղագիտական ճաշակի դաստիարակումը և այլն:

Ընդհանրապես, գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է, ավելին՝ ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ: Այդ կապերին դեռևս հինգերորդ դարում անդրադարձել է հայ պատմիչ և փիլիսոփա Եզնիկ Կողբացին, ով գտնում է, որ մարդու ստեղծած գեղեցիկը պետք է ծառայի բարուն[7]:

Գեղագիտական դաստիարակությունը իրականացնում է երկու հիմնական գործառույթ. այն ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը և զարգացնում նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է. մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը: Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար:

Գեղագիտական դաստիարակությունը իրականացվում է բոլոր հասակներում: Եվ ինչքան շուտ է մարդը ենթարկվում նպատակաուղղված գեղագիտական ներգործության, այնքան մեծ է դրա արդյունավետ լինելու հավանականությունը[7]:

# ԳԼՈՒԽ II ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ , ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ԿԵՐՊԱՐՎԵՍՏ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԳԵՂԱԳԻՏԱԿԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## 2.1 Մայրենի լեզվի դերը գեղագիտական դաստիարակության մեջ:

Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնահարցը եղել ու մնում է որպես մանկավարժության հույժ կարևոր խնդիրը, որը հնարավոր չէ կատարել առանցպատշաճ գեղագիտական դաստիարակության: Իր «Գեղեցկության իմաստությունը» ուշագրավ աշխատության մեջ Բ.Ն. Նեմենսկին իրավամբ գտնում է, որ խիստ անհրաժեշտ է ստեղծել դպրոցականների գեղագիտական դաստիարակության միասնական համակարգ, և «կոորդինացված երեք ուսումնական առարկաները երաժշտությունը, կերպարվեստը, գրականությունը, պետք է կազմեն գեղագիտական դաստիարակության համակարգի ամուր հիմքը» [4]:

Գեղագիտական դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է մայրենի լեզվի տիրապետումից: Գաղտնիք չէ, որ միջնակարգն ավարտած, այսօր բարձրագույն դպրոցում սովորող մեր երիտասարդների մեծամասնությունը խոսում է չկազմակերպված, պարզունակ ու աղքատիկ լեզվով, որն ընդունակ չէ հաղորդել նրանց մտքերն ու հույզերը, ինչը, չարտահայտված լինելով այլևս չի զարգանում: Մայրենին աղավաղվում է տարբեր ռադիոկայաններից, հեռուստաթերից հնչող խոսքում: Կենցաղային բարբառը, անճաշակ արտահայտությունները,տափակ հումորը և, վերջապես, գռեհիկությունը առանձապես ծաղկում են լեզվի և արտահայտության գեղագիտական կողմը անտեսելու, գրական ու փողոցային լեզուների խառնուրդի հետևանքով: Անտարակույս, արժե դպրոցականների ուսումնական առարկաների ցանկ մտցնել ճարտասանության մի դասընթաց, մեր երեխաները պետք է հնարավորություն ստանան զգալու հայոց լեզվի գեղեցկությունը, որին կհետևի հոգատար վերաբերմունքը մայրենիին: Նույն այդ խնդրին կարող է ծառայել գեղագիտական դաստիարակության անփոխարինելի միջոցը հայ գրականությունը: Դաստիարակչական նպատակներով անշուշտ կարելի է օգտագործել արևելյան մշակույթներում լայնորեն կիրառվող, դարերի փորձությունն անցած աֆորիզմներն ու ասացվածաբանությունը: Աֆորիզմներում է

խտացվել մարդկության բարոյագեղագիտական արժեքների զգալի մի շերտ, իսկազգային բանահյուսությունը անգնահատելի շտեմարան է, որտեղ վառ կերպարայնությամբ են արտացոլված գեղեցիկի ու տգեղի, իմաստության ու հիմարության, առաքինության ու ստորության , բարու ու չարի համամարդկային և ազգային բնորոշումները: Այլաբանությունների մատչելի եղանակով դրանք ներշնչումեն այն բարձր իդեալները, որոնց պետք է շարունակ ձգտի արատներից խուսափել ցանկացող մարդը[6]:

2.2 Երաժշտության դերը գեղագիտական դաստիարակության մեջ:

Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները[5]:

Երաժշտությունը, որպես գեղագիտական արվեստ, գաղափարը գիտական շրջանառության մեջ է մտել գերմանացի հրապարակախոս, բանաստեղծ և երաժիշտ Քրիստիան Ֆրիդրիխ Շուբերտի կողմից: Նա առաջին անգամ օգտագործեց այս տերմինը իր «Գաղափարներ երաժշտական արվեստի գեղագիտության համար» աշխատությունում 1784թ.: Երաժշտական գեղագիտությունը գիտական առարկա է, որը զբաղվում է երաժշտության տարբեր գեղագիտական ասպեկտների ուսումնասիրությամբ, որպես արվեստի շատ յուրահատուկ ձև[9]: Երաժշտությունը սկիզբ է առել հին ժամանակներից : Լսելով տարբեր ժամանակներում գրված երաժշտություն ՝ մարդիկ գաղափարներ են ստանում տարբեր դարաշրջաններում գոյություն ունեցող զգացմունքների, մտքերի արտահայտման տարբեր ձևերի մասին: Արտացոլելով կյանքը և կատարելով ճանաչողական դերը ՝ երաժշտությունն ազդում է մարդու վրա, դաստիարակում նրա զգացմունքները և ձևավորում ճաշակներ: Բովանդակությամբ երաժշտությունը հարստացնում է ունկնդրի հուզական աշխարհը[9]:

Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել:

Արվեստի տարբեր տեսակները մարդու վրա ազդելու հատուկ միջոցներ ունեն, մինչդեռ երաժշտությունը հնարավորություն ունի ազդելու երեխայի վրա ամենավաղ փուլերում: Ապացուցված է, որ նույնիսկ նախածննդյան ժամանակահատվածը չափազանց կարևոր է մարդու հետագա զարգացման համար: Այն երաժշտությունը, որը լսում է ապագա մայրը, ազդում է երեխայի բարեկեցության վրա, և ձևավորում է նրա նախասիրությունները: Աստիճանաբար, տարբեր տեսակի երաժշտական գործունեության տիրապետման գործընթացում անհրաժեշտ է երեխաների մոտ զարգացնել ընդհանուր և հատուկ երաժշտական ունակություններ:

Ըստ ռուս երաժշտագետ Բ. Ասաֆևի՝ «Երաժշտությունը իրականության կերպարահնչյունային արտացոլումն է», նրանում հնչում է կենդանի խոսք՝ հուզված կամ հանգիստ զրույց, դիմում, կոչ, հարց ու պատասխան: Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ: Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն: Ահա թե ինչպես է արտահայտվել երաժշտության ազդեցության մասին մեծ Կոմիտասը. «Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է: Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան»[2]:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ - անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության

զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը[2]:

Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ: Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Երաժշտական փորձառությունը կարող է նրանց համար արդյունավետ լինել լեզվական,ճանաչողական և շարժողական կարողությունների զարգացման համար՝ միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով սոցիալականացման համար:

Արվեստը հասկանալու բանալին առօրեականի և գեղարվեստականի փոխհարաբերության ընկալումն է, սովորողը արվեստի առարկաների դասավանդման ընթացքում իր ստացած գիտելիքների, ձևավորված հմտությունների, վերաբերմունքի և արժեքների շնորհիվ պետք է հասկանա, ընկալի, թե ինչպես է առօրեականը արվեստի միջոցով դառնում կատարյալ, այսինքն՝ գեղարվեստական[2]:

2.3 Կերպարվեստի դերը գեղագիտական դաստիարակության մեջ:

Կրթական համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում գեղագիտական դաստիարակությունը, որը նպաստում է ուսուցման գործընթացում աշակերտների աշխարհայացի, մտավոր և ստեղծագործական ներուժի զարգացմանը: Գեղագիտական դաստիարակությունը ունի առանցքային հիմք, որի վրա հենվում է: Այսպիսով մենք կարող ենք գեղագիտական դաստիարակության համակարգում հիմքը համարել արվեստը, մասնավորապես ՝ ճարտարապետություն, քանդակ, կերպարվեստը և այլն[11]:

Դեռ հին ժամանակներից հայտնի նկարիչները և արվեստագետները՝ Ալբրեխտ Դյուրեր, Լեոնարդո դա Վինչին և այլոք ստեղծել են մանակավարժական նշանակութուն ունեցող գրքեր, դասգրքեր, որոնց միջոցով փորձել են մարդուն էլ ավելի մոտեցնել արվեստին և նրա մեջ սերմանել գեղագիտական ճաշակ և գեղեցիկը ընկալելու, գնահատելու կարողություն:

Կերպարվեստը և կիրառական արվեստը հարուստ են ստեղծագործականության, ֆանտազիայի, ինտուիցիայի զարգացման մեծ հնարավորություններով: Երեխայի կողմից ձեռքիաշխատանքը միշտ ընկալվում է ուրախությամբ, որպես ստեղծագործական գործընթաց: Ստեղծագործական զարգացման գործընթացում արվեստը անփոխարինելի դեր է խաղում: Այն ի վիճակի է փոքրիկ մարդուն ներմուծել ստեղծագործական աշխարհ, որոշ չափով նրան ծանոթանալով մշակույթի գանձերին:

Կերպարվեստային ընդունակությունների և պատկերացումների ձևավորումը հիմնականում տեղի է ունենում ծեփակերտման, նկարչական աշխատանքների միջոցով[12]:

Նկարչության դասը կարող է երեխային բերել առաջին ստեղծագործական ուրախությունները, իսկ ստեղծագործության բերկրանքը երկրի ամենամեծ ուրախություններից մեկն է, որը հարստացնում է ներքին աշխարհը, տալիս ուժ, վստահություն, խրախուսում է մարդուն հետագա զարգացման, ինքնակատարելագործման:

Կերպարվեստի դերը գեղագիտական դաստիարակության մեջ մեծ է: Երեխաների կերպարվեստային և ստեղծագործական գործունեության արդյունավետությունը կախված է մի շարք պայմաններից.

ա) ուսուցման մեթոդների ճիշտ օգտագործումը.

բ) կերպարվեստի պարապմունքների որոշակի ռիթմով հերթագայելը (բնօրինակից նկարչության մի պարապմունքին հաջորդելու է ծեփակերտումդ, ապա ապլիկացիան և այլն)[12]:

Կերպարվեստը լայնորեն կիրառվում է երեխաների կրթական աշխատանքների կազմակերպման գործում: Կեպարվեստը հանդես է գալիս որպես տարածքների զարդարանք, այն օգտագործվում է գեղարվեստական և խոսքային գործունեության մեջ: Միևնույն ժամանակ, կերպարվեստի միջոցով երեխաների ուշադրությունը պետք է ուղղորդել ինչպես նկարի բովանդակությանը, այնպես էլ արտահայտչամիջոցներին՝ տողեր, ներկեր, գծապատկերում օբյեկտների դասավորություն վրա այնպես, որ երեխան զգա գեղեցկությունը և հասկանա պատկերվածի իմաստը:

Վետլուգինան գեղագիտական դաստիարակությունը համարում է զարգացում կյանքում և արվեստում գեղեցիկը ընկալելու, զգալու, հասկանալու կարողություն[10]:

Արվեստի բոլոր տեսակները՝ երաժշտությունը, նկարչությունը, քանդակագործությունը, ճարտարապետությունը, թատրոնը, կինոն, լուսանկարչությունը և այլն, իրենց խորը կնիքն են դնում մարդու անհատականության և հոգևոր արժեքների ձևավորման վրա10: Արվեստը մարդուն օգնում է հատկապես ինքնադաստիարակության գործում, որն անհնար է առանց մարդու բազմակողմանի և ճիշտ ինքնադիտողունակության: Արվեստը գեղագիտական հաճույքի մեծագույն աղբյուր է: Այն արդարացիորեն անվանում են «զգայելու գիտություն», որն ի զորու է սովորեցնել զգալ, շարժել մարդու զգայական աշխարհը: Սակայն սա պիտի չլինի ինքնանպատակ, այլ կրթելու, դաստիարակելու միտում ունենա:

Կերպարվեստը և երաժշտությունը մարդու հոգևոր աշխարհի կերտման միջոց են դառնում դեռևս վաղ մանկուց: Երեխան այս ասպարեզում իր առաջին քայլերն անում է դեռևս նախադպրոցական տարիքում: Կերպարվեստի դասաժամերը աշակերտներին հաղորդում են տարրական կարողություններ, հմտություններ՝ միաժամանակ որոշակի հետևողականությամբ օժանդակելով նրանց ստեղծագործական ունակությունների զարգացմանը, ծանոթացնում են ճանաչված նկարիչների ստեղծագործություններին և դրանց գնահատականներին[3]:

2.4 Մաթեմատիկայի դերը գեղագիտական դաստիարակության մեջ:

Հանրակրթական դպրոցի մաթեմատիկայի ուսումնական բնագավառի առարկաները կարևոր տեղ են զբաղեցնում ուսումնական առարկաների ցանկում և, միաժամանակ, ունեն գեղագիտական արժեքների ձևավորման, գեղագիտական դաստիարակության մեծ ներուժ: Այդ խնդրի լուծման համար հիմք են ծառայում մաթեմատիկայի ևգեղագիտական արժեքների միջև առկա խորքային կապերը, որոնք դրսևորվում են երաժշտության, նկարչության, ճարտարապետության և արվեստի այլ բնագավառներումմաթեմատիկայի լայն կիրառություններով: Մյուս կողմից, մաթեմատիկան ավելի, քան գիտության որևէ այլ բնագավառ, բավարարում է գիտական գեղեցիկին ներկայացվող պահանջներին: Ավելին, մարդկային խոսքի այնպիսի կարևորագույն տարրեր, ինչպիսիք են հիմնավորվածությունը, տրամաբանական խստությունը ևապացուցվածությունը, որոնք համարվում են գիտական գեղեցիկի օբյեկտիվ հատկանիշներ, իրենց լիարժեք դրսևորումը ստանում են հենց մաթեմատիկայում[1]:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում գեղագիտական տարրի բացահայտումը ոչ միայն նպաստում է սովորողի գեղագիտական ունակությունների զարգացմանը, այլև թույլ է տալիս ավելի արդյունավետ դարձնել բուն մաթեմատիկայի ուսուցման գործընթացը: Օրինակ, սովորողների տոկունությունը, նպատակասլացությունը, հետևողականությունը կամային այլ որակները լավագույնս դրսևորվում են մաթեմատիկական նյութի և դասավանդման գործընթացի մեջ գեղագիտական բաղադրիչի առկայության դեպքում:

Գեղագիտական արժեքների ձևավորման հարցը սերտորեն առընչվում է մաթեմատիկայի գիտական և կրթական բովանդակությունների փոխհարաբերության, մաթեմատիկայի ուսուցման նպատակների, գործառույթների, արդիականացման, մաթեմատիկական օբյեկտների՝ հասկացությունների, թեորեմների, ապացուցումների, խնդիրների ու դրանց լուծման և այլ հիմնախնդիրների հետ:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացի միջոցով սովորողների գեղագիտական դաստիարակության խնդիրը ուսումնասիրվել է բազմաթիվ հետազոտողների կողմից: Մաթեմատիկայի ուսումնաճանաչողական գործընթացի գեղագիտական բաղադրիչի իրականացման և խորացման հարցը համակողմանիորեն ուսումնասիրել են Վ. Ա. Կրուտեցկին, Վ.Լ.Մինկովսկին, Ս.Ի.Շոխոր-Տրոցկին, Գ.Ի.Սարանցևը և ուրիշներ:

Ա. Լ. Ժոխովը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում գեղագիտականի ձևավորման հարցը կարևորում է սովորողների աշխարահայացքի ձևավորման տեսակետից՝ այն դիտելով որպես դրա իրականացման ուղենիշ[1]:

2.5 Ես և շրջակա աշխարհի դերը գեղագիտական դաստիարակության մեջ:

Կարևոր է դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը կազմակերպել բնության միջոցով, սակայն խոսքը չի վերաբերում բնության հետ պարզագույն շփմանը: Բնությունը զարգացնում է սովորողների երևակայությունը, դիտողունակությունը: Սակայն դա ինքնաբերաբար չի կատարվում: Բնության գեղեցկությունը, նշանակությունը ընկալելու, հասկանալու համար անհրաժեշտ է նախապատրաստական որոշակի աշխատանք կատարել: Երեխային պետք է դաստիարակել այնպես, որ նա ընկալի բնության հմայքը, գեղեցկությունը, լինի գեղագիտական արժեքների կրողը: Դեռահասներին պետք է սովորեցնել ոչ միայն սիրել

բնության գեղեցկությունը, այլև պաշտպանել այն և հոգ տանել նրա մասին: Միայն բնության գեղեցկությունն ու կարևորությունը գիտակցող մարդը կարող է հոգատար վերաբերմունք ցուցաբերել բնության նկատմամբ: Ուստի երեխաների մեջ պետք է սերմանել հարգանք և պատասխանատվություն բնության հանդեպ, որպեսզի նրանք ոչ միայն զմայլվեն, հիանան գեղեցիկ ծառ ու ծաղկով, սար ու դաշտով, այլև մտածեն բնության պահպանության և խնամքի գործում իրենց սեփական ներդրման մասին:

Ամեն մի ժողովուրդ ծագում և ձևավորվում է որոշակի կլիմա, որոշակի բնություն ունեցող տարածքում: Բնության առանձնահատկությունները մեծապես ազդում են տվյալ ժողովրդի զարգացման ուղիների վրա' սկսած արտադրության եղանակից մինչև ազգային բնավորությունը: Ժողովրդի «օրրանի» բնակլիմայական յուրահատկությունը ասես դրոշմվում է ազգային մշակույթի մեջ, անջնջելի հետք թողնում տվյալ էթնոսի ներկայացուցիչների աշխարհզգացողության և գեղագիտական ընկալման յուրահատկությունների վրա[6]:

Մանկավարժագետ Լ. Ասատրյանը նշում է. «Մարդը դարեր շարունակ իմաստավորել է բնությունը, իր կյանքի ուղեկիցներ դարձած բույսերի ու կենդանիների կյանքը, թափանցել է բնության զանազան երևույթների խորքը և հենց իրեն ճանաչելով՝ ընդհանրացրել է իր փորձն ու գործը, որոնք և Հին Արևելքի երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, նախնադարյան բնապաշտական գաղափարախոսության ձևավորման և հարատևման հիմք են դարձել» [3]:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով մայրենի լեզու, երաժշտություն, կերպարվեստ, մաթեմատիկա, ես և շրջակա առարկաների դերը գեղագիտական դաստիարակության մեջ, եկա այն եզրակացության, որ՝

- Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է:
- Գեղագիտական դաստիարակությունը իրականացվում է բոլոր հասակներում: Եվ ինչքան շուտ է մարդը ենթարկվում նպատակաուղղված գեղագիտական ներգործության, այնքան մեծ է դրա արդյունավետ լինելու հավանականությունը:
- Գեղագիտական դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է մայրենի լեզվի տիրապետումից:
- Երաժշտական գեղագիտությունը գիտական առարկա է, որը զբաղվում է երաժշտության տարբեր գեղագիտական ասպեկտների ուսումնասիրությամբ, որպես արվեստի շատ յուրահատուկ ձև:
- Կերպարվեստը և կիրառական արվեստը հարուստ են ստեղծագործականության, ֆանտազիայի, ինտուիցիայի զարգացման մեծ հնարավորություններով:
- Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում գեղագիտական տարրի բացահայտումը ոչ միայն նպաստում է սովորողի գեղագիտական ունակությունների զարգացմանը, այլև թույլ է տալիս ավելի արդյունավետդարձնել բուն մաթեմատիկայի ուսուցման գործընթացը:
- Կարևոր է դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը կազմակերպել բնության միջոցով: Բնությունը զարգացնում է սովորողների երևակայությունը, դիտողունակությունը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Արմինե Նալբանդյան << Մաթեմատիկան դպրոցում>>.-Եր. 2014
2. <<Երաժշտություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր: Հաստատված է 2012թ.:
3. Լ. Ա. Մարգարյան << Գեղավեստամանկավարժական գործոնի դերը հոգևոր դաստիարակության մեջ>>.- Եր. 2012
4. Լալա Մամյան << Կրտսեր դպրոցականի գեղագիտական զգացմունքների դաստիարակությունը մայրենի լեզվի ուսուցման գործընթացում>>:
5. Յու. Ա. Ամիրջանյան,<<Մանկավարժություն>>ուսումնական ձեռնարկ,- <<մանկավարժ>>հրատ.2005թ.
6. Սոնա Պողպատյան << Գեղագիտական դաստիարակության ազգային ասպեկտները>>:
7. Վ.Ա.Հովսեփյան <<Գեղագիտական ուսմունքների պատմություն>> Եր.,1979:
8. Большая советская энциклопедия, Третье издание, М., 1969- 1978.
9. Зарецкая Юлия Викторовна // Музыкально-эстетическое воспитание детей дошкольного возраста//
10. Л.И. Пономарева // Изобразительное искусство как содержательный компонент эстетического воспитания дошкольников// УДК 371.036
11. Семенова Мария Александровна // Роль эстетического воспитания в гармоническом развитии личности ребёнка //.- 2018, №1, Том 6
12. . https://gohardanielyan.wordpress.com/2018/06/04/